ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ Լոռու մարզի Մեծավանի համայնքապետարանի կարիքների համար Մեծավան համայնքի Թեիլերյան, Խաչատրյան, Կոմիտաս, Աբովյան և Վարդանանց փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Տաշիր	«21» «օգոստոսի» 2020թ ժ 11:00
Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Մ. Սուքիասյան
Հանձնաժողովի անդամներ՝	Վ. Դումիկյան
	Տ. Խաչատրյան
	Վ. Մարկոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ. Մարկոսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

/Մ. Սուքիասյան/

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Բանակցությունների կազմակերպման մասին
3. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակցի մասին
4. Գնահատման արդյունքների և ընտրված մասնակիցների մասին
5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. Բանակցությունների կազմակերպման մասին

/Մ. Սուքիասյան/

2.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասը և «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշումով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով ընթացակարգի մասնակից «Էներգացանցշին» ԲԲԸ-ի, «Հ. Պողոսյան» ՍՊԸ-ի, «ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ-ի և «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները 21.08.2020թ. ժամը 11:00-ին հրավիրվել է ՀՀ Լոռու մարզ, ք. Մեծավան, Զորավար Անդրանիկի 2, Մեծավանի համայնքապետարանի վարչական շենք հասցեում գների նվազեցման շուրջ բանակցությունների:

2.2 Բանակցությունների ավարտին «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների՝ «Էներգացանցշին» ԲԲԸ-ի, «Հ. Պողոսյան» ՍՊԸ-ի, «ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ-ի և «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ	Չափաբաժնի անվանումը	Մասնակցի անվանումը	Առաջարկած գինը			Նախա-հաշվային գինը
			Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր	
1	ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի Թեիլերյան, Խաչատրյան, Կոմիտաս, Աբովյան և Վարդանանց փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ	«Էներգացանցշին» ԲԲԸ	11800000	2360000	14160000	22775750
		«Հ. Պողոսյան» ՍՊԸ	11600000	2320000	13920000	
		«ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ	22651000	0	22651000	
		«ՓԱՅԼՔ» ՍՊԸ	**11580000**	**2316000**	**13896000**	

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

3. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների մասին

/Մ. Սուքիասյան/

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշումով «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել.

1-ին չափաբաժնի համար «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ը՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

4. Գնահատման արդյունքների և ընտրված մասնակիցների մասին

/Մ. Սուքիասյան/

4.1 Հիմք ընդունելով գնահատման թերթիկները՝ հաստատել **«ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-20/15»** ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի, հայտերի գնահատման արդյունքները և հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակցին. 1-ին չափաբաժնի համար՝ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ը:

4.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել հինգ օրացուցային օր /22.08.2020-26.08.2020/: Անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ին:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

/Մ. Սուքիասյան/

5.1 «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով ընթացակարգի աշխատանքների վերաբերյալ հաշվետվության հաստատման, արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրը, ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծավան, Զորավար Անդրանիկի 2, Մեծավանի համայնքապետարանի վարչական շենք:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Մ. Սուքիասյան
Անդամներ՝		Վ. Դումիկյան
		Տ. Խաչատրյան
		Վ. Մարկոսյան
Քարտուղար՝		Գ. Մարկոսյան